

ԱՅՈՒՅԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄՆԵՐ

Պ. Հ. ՀԱՅՈՒՅԱՆ

Արդեն մի քանի տարի է, ինչ Մ. Աբրահամյանի տնվան Գրականության ինստիտուտի հանձնարարությամբ որոնումներ են կատարում իս. Աբովյանի կյանքի և ստեղծագործության անծանոթ՝ չքերը հայտնաբերելու նպատակով:

Ստորև շարադրված են այն արդյունքները, որ ձեռք են բերվել անցյալ՝ 1959 թվականին ղեկավարող, Հենինգրադ, Կիև և Կազան քաղաքները կատարած մեր գիտական գործուղման ժամանակ:

I

Հենինգրադյան արխիվներում աշխատել էինք 1956 թվականի դեկտեմբերին ևս: Այս անգամ շարունակեցինք որոնումները: Կիևում կատարված են միայն հետախուզական պրպտումներ. տակավին չի հաջողվել գտնել Աբովյանի մանրիմ ընկերոջ՝ Կիևի համալսարանի երկարամյա պրոֆեսոր և երբեմնի ուսկույր, հայտնի աստղաբաշխ Վ. Ֆյոդորովի (1802—1855) արխիվը, ուր, համոզված ենք, շատ նյութեր պետք է լինեն Աբովյանի մասին: Այսպիսով, անցյալ տարվա գործուղման ժամանակ հիմնական ուղադրությունը կենտրոնացած է եղել էստոնական ՍՍՌ Տարտու քաղաքի արխիվների վրա, քանի որ դրանք քիչ են ուսումնասիրվել արովյանագետների կողմից:

Ինչ գրական նշխարներ են մնացել առաջին մեծ հայ գորպատցուց՝ խաչատուր Աբովյանից և ինչ անծանոթ վավերագրեր հնարավոր կլինի ձեռք բերել, որոնք նոր, անծանոթ չքեր բաց անեն մեր նոր գրականության հիմնադրի կյանքի ու գործունեության մատչանում: Ահա այն հիմնական հարցերը, որոնց պարզաբանման էին նվիրված մեր հետախուզումները Տարտուի համալսարանի գրադարանի, էստոնիայի Ակադեմիայի Ֆ. Կրեյցվալդի անվան Գրական թանգարանի, էստ. ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվի հնօրյա գրքերի, պարբերականների ու ձեռագրի վավերագրերի հավաքածուներում: Աբովյանին վերաբերող նյութերն են եղել մեր ուղադրության կենտրոնում նաև Հենինգրադի Պուլկինյան տան Ձեռագրերի բաժնում և Կիևի ու Կազանի գրական-պատմական արխիվներում որոնումներ կատարելիս:

Ասենք նախապես, որ արդյունքը գերազանցեց մեր սպասելիքները. և՛ Տարտու, և՛ Հենինգրադ, և՛ Կիև քաղաքների հիշյալ հաստատություններում հանգչում էին բազմաքանակ վավերագրեր և նյութեր շատ ու շատ հայ գրողների, գիտնականների, մտավորականների, ի թիվս որոնց նաև իս. Աբովյանի անձի ու գործի վերաբերյալ:

Առաջին նորությունը իս. Աբովյանի «Առաջատ», «Դիվի», «Անի» և «Ակոռի» վերնագրով պատմական ակնարկների բնագրերն են, որ հայտնաբերեցինք Ուկրաինական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տ. Ենչենկոյի անվան հանրային գրադարանի ձեռագրերի բաժնում (առանց անվանաթերթի ու հեղինակի ստորագրության), «Армянский сборник» խորագրով մի թղթածրարում¹:

Հիշյալ պատմական ակնարկները Աբովյանը գրել է 1846 թվականի հոկտեմբերին, ռուս պատմաբան Ա. Ն. Մուրավյովի (1806—1874) խնդրերով և հանձնել է նրան նույն այդ ժամանակ, առնանալ հավանականությամբ էջմիածնում: Ա. Ն. Մուրավյովը Աբովյանի ակնարկների հիմնական բովանդակությունը ցրիվ է տվել իր «Грузия и Армения» եռահատոր ուղե-

¹ ՏԵՄ № 427 ըստ А. Лебедев, Рукописи церковно-археологического музея Киевской духовной академии ձեռագրապահապահ:

դրությամբ Երկրորդ մասի զանազան էջերում, շնչելով, որ ազդեցությունը Աբովյանի ակնարկներն են եղել: Այնուհետև, Ա. Ն. Մուրավյովի մյուս թղթերի հետ միասին, այդ ձեռագիրն էլ ճամփորդել է Քիթլիսից Պետերբուրգ, իսկ հետո՝ փոխադրվել Մոսկվա: 1878 թվականին Ա. Մուրավյովի ժառանգները, ի թիվս այլ նյութերի, Աբովյանի պատմական ակնարկների բնագիրը նվիրում են Կիևի Հոգևոր ակադեմիայի թանգարանին, ուր և այն մնում է մինչև Հայրենական Մեծ պատերազմը (1941): Ուկրաինական շատ արխիվների նման Հոգևոր ակադեմիայի հավաքածուն նույնպես ենթարկվում է պատահարների: Էվակուացիայի ժամանակ շատ նյութեր ոչնչանում են կամ կորչում, սակայն անվթար մնացած թղթածրարների մեջ պահպանվել են նաև Աբովյանի էջերը: Ա. Ն. Մուրավյովի գրքում եղած անուղղակի ակնարկներից դատելով, դրանց հետ սկզբում եղել են նաև Կեչաուցիի տաճարի մասին Աբովյանի գրած մի ակնարկն ու ազգագրական մի հոդված՝ եգիպտական ու բյուզանդական մասին: Վերջինների հետագա բախտը մեզ հայտնի չէ: Այժմ մնացել են վերնում թվարկված չորս ակնարկները՝ Արտաշատի, Դվինի, Անիի ու Ակոռիի մասին:

Այս ակնարկներում Աբովյանը սեղմ ձևով տվել է հին Հայաստանի պատմական կյանքում մեծ դեր խաղացած հիշյալ քաղաքների հիմնադրման ու զարգացման պատմությունը, մեջբերել առանձին գրվածքներ օտար լավթիշների գեմ այդ քաղաքների բնակչության մղած հերոսական պայքարից, հավաստելով դրանք հայ և օտար պատմագիրներից արած վկայակոչումներով ու քաղվածքներով: Դվինին ու Արտաշատին նվիրված ակնարկներում թուուցիկ ձևով փորձ է արված որոշելու նաև դրանց տեղագրությունը: Միջանկյալ նկատենք, որ Արտաշատի ու Դվինի տեղագրության հարցը Աբովյանը լուծված է համարել: «Հայ պատմագիրները շփոթում են հաճախ այս քաղաքի (Արտաշատի—Պ. Հ.) անունը Դվինի հետ, հավանաբար մեկը մյուսին մոտիկ լինելու պատճառով», գրել է Աբովյանը Արտաշատին նվիրված ակնարկում: Հենվելով հայ և օտարագրի մատենագիրների, ինչպես նաև տեղում կատարած անձնական դիտողությունների վրա, նա որոշակի ցույց է տալիս երկու քաղաքների տեղերն էլ: Արտաշատը՝ Արաքսից ձախ և Գառնի-Հայից արևելք, «ուր այժմ դա մի հսկայական ճահիճ», և Դվինը՝ «այժմյան Շարուրի և Գառնիքասարի գավառամասերի միջև», «Արտաշատից հյուսիս, Մեծամորի (Գառնի-Հայ) գետի մոտ, հարթ տեղում»:

Աբովյանի այս ակնարկները ցույց են տալիս նաև, որ նա լավ է իմացել հայոց անցյալ պատմությունը և ժողովրդական ավանդությունների մեջ տեսել է ժողովրդի իրական պատմության արձագանքները: Ամենից չերժ Աբովյանը գրել է Անիի մասին, քանի որ Անին նրա համար եղել ու մնացել է որպես հայ ժողովրդի հոգևոր մշակույթի բարձրակետ, որպես հայկական անկախ պետականության խորհրդանիշ:

Երկրորդ նորությունը «Dorptsche Zeitung» պարբերաթերթի 1834 թ. դեկտեմբերի 1-ի համարում տպագրված մի հոդված է, որ թարգմանել ու ծանոթագրել է Պ. Աբովյանը՝ «Auszug eines Briefes eines armenischen Geistlichen an sein in Dorpat Studirenden Landsleute» («Քաղվածք Դորպատում սովորող իր հայրենակիցներին ուղղված մի հայ հոգևորականի նամակից»): Այստեղ պատմվում է հայ բանաստեղծ և մանկավարժ Հարություն Արամ-դուրյանի ողբերգական վախճանի մասին: Հիշյալ հոդվածի տպագրված լինելու մասին գոյություն ունեն Աբովյանի վկայությունը², որ ուսումնասիրողներին ծանոթ էր Ն. Տեր-Կարապետյանի մի այլափոխված հաղորդմամբ՝ դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից³, Առաջներում մեր ուշագրություն էր դրավել «Dorptsche Zeitung» լրագրի խմբագիր Գ. ֆոն Ֆորժստերի

¹ Այս կապակցությամբ ուսումնասիրողներին ուշագրություն ենք հրավիրում Ա. Ն. Մուրավյովի «Грузия и Армения» գրքի վրա (հ. 111), ուր առավել մանրամասնաբար խոսվում է Արտաշատի և Դվինի տեղագրության մասին, Էլակետ ու առաջնորդ ունենալով Աբովյանի անձնական ցուցումները և հիշյալ պատմական ակնարկները:

² Տե՛ս Պ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. V, էջ 302 (հետագայում՝ ՊԱԵԼԺ):

³ Տե՛ս «Լուծմա», 1897, № 1, էջ 77: «Այդ ժամանակ Մսեր Մսերյանից մի հոդված (sic!) է ստանում, որ և թարգմանելով տալիս է Դորպատում հրատարակող գերմանական մի լրագրի տպելու»:

1834 թ. նոյեմբերի 29-ի Արեւիկայի ուղղված մի անտիպ նամակը¹, որ նույնպես խոսում է Սերբիայի առաջին համարում հողվածի սոցալդիման մասին: Բայց թե այդ հողվածն իրենից ի նշ էր ներկայացնում, պարզվեց միայն այժմ:

Հողվածի առաջին մասը գրվում է Մ. Մսերյանի և, Արեւիկայի ուղղված 1834 թ. հոկտեմբերի 27-ի նամակի խմբագրված թարգմանությունը², իսկ երկրորդ մասը Արեւիկայի համառոտ բացատրական է՝ Զ. Ալամդարյանի, Ներսես Աշտարակեցու և Մսեր Մսերյանի մասին:

Գերմանացի ընթերցողների համար վերաշարադրելով հայ ականավոր բանաստեղծի մահը գոմոլ հայրենիքից ստացված այդ նամակը, Արեւիկայի Ալամդարյանի մասին ավելացնում է հետևյալ արձեղավոր տողերը. «Նա ամեն առումով մի արտակարգ մարդ էր, որի մահով նրա հայրենիքը կորցրեց անդառնալիորեն շատ բան: Դաստիարակվելով Մոսկվայում, նա մի աշխարհի կրթություն էր ստացել, որին հայերի մեջ նրա ժամանակակիցներից և ոչ մեկը չէր կարող հավասարվել: Այնուհետև անդրադառնալով Ալամդարյանի թողած գրական ժառանգությանը, Արեւիկայի ընդգծում է, որ նա «ստեղծել է շատ մեծարժեք երկեր ու բանաստեղծություններ»: Հիշյալ հողվածը ըստ հաջորդականության երկրորդ գործն է, որ Արեւիկայի հրատարակել է ժամանակի մամուլում: Այն ոչ միայն երախտագետ աշակերտի սրտից բխած անկեղծ խոսք է՝ ուսուցչի հիշատակին, այլև Ալամդարյանի գործունեության արձեղավորման առաջին փորձը:

«Dorptsche Zeitung»-ի միջոցով մերձբլայան և արտասահմանյան ընթերցողներին ծանոթացնելով Ալամդարյանի անձին ու գործին և նրա մահվան պատճառով հայ ժողովրդին հասած ծանր կորստին, Արեւիկայի միամասնակ ուղում էր ցույց տալ, որ եվրոպական հետադեմ պատմագրության կողմից արհամարհված փոքր ու ճնշված ժողովուրդները նույնպես շատ բաներ են ստել աշխարհին, որ նրանց մեծ և հայրենանվեր զավակները ևս արժանի են ընդհանուր ճանաչման ու մեծաբանքի:

Երրորդ նորությունը Արեւիկայի ինքնակենսագրությունն է՝ գրված հարց ու պատասխանի ձևով, 1830 թվականի աշնանը, Դորպատում: Ավելորդություններից խուսափելու համար մեջ ենք բերում այդ վավերագիրն ամբողջությամբ, քաղելով Արեւիկայի ուսանողական տետրակներից:

«Ռուսից ԼԷ դուր ծնվել: — Ես ծնվել եմ Քանաքեռ գյուղում, Երևանի մոտ:

Կենդանի՝ ԼԷ դու Զեր հայրը, Զեր ծնողները: — Այո՛, փառք ասած: Իմ հայրն ու մայրը խնայես նաև երկու եղբայրները կենդանի են և առողջ:

Ռուսից ԼԷ Դուր ստացել սկզբնական կրթությունը: — Էջմիածնի վանքում, որ եկա ես իմ կյանքի իններորդ տարում և կարգվեցի վանական կոչման:

Եղևի՛ ԼԷ Դուր այնուհետև կրկին վաճում: — Ո՛չ. վեց տարի հետո ինձ տարան Տփլիսի հայկական դպրոցը, որ ես տարի ու կես դասեր առա հայոց լեզվից, ռուսաց լեզվից և ճարտասանությունից: Բացի այդ նաև տարրական բաներ պարսկերեն լեզվից: Այնուհետև կրկին փոխադրվեցի Էջմիածնի վանք, ստացա հոգևոր կոչում և երրորդ տարում աշխատում էի վանքում որպես թարգման, երբ պարոն պրոֆեսոր Պարոտի ժամանման հետևանքով փոխվեց իմ հակառակը³:

Այս վավերագրից պարզվում է հետևյալը. Արեւիկայի ծնվել է 1809 թվականին: 9 տարեկան հասակում (1818) տարվել էջմիածնի վանք: Վանք տարվելուց վեց տարի հետո, 1824 թվականին (իմա՝ դեկտեմբեր—Պ. Զ.) մտել է Ներսիսյան դպրոց, ուսանելով այնտեղ տարի ու կես: Դրանից երեք տարի հետո, 1829 թվականին ուղեկցել է Պարոտին:

Հարկ է նշել, որ ծննդյան նույն 1809 թվականն է ականարկում նաև մի ուրիշ նորահայտ վավերագիր: Մեր խոսքը Դորպատի Լանդզերխիստում 1831 թվականի օգոստոսի 18-ին Արեւի-

¹ Հիշյալ նամակում ասված է. «Dorptsche Zeitung»-ի հաջորդ համարում պետք է տպագրվի Զեր հողվածը. «ավելի շուտ այդ հնարավոր չէր անել՝ երբ դուք ժամանակ կունենաք, մի վարկյանով անցեք ինձ մոտ, շատ եմ խնդրում դրա համար. ես ուզում եմ հաճույքով մի քանի անունների մասին Զեզ հարցնել» (հայկական ՄԱԹ Գիտությունների ակադեմիայի Գրականություն թյան և արվեստի թանգարան, Խ. Արեւիկայի արխիվ, № 152), (հետագայում՝ ԳԱԹ ԱԽԱ):

² Եկատենք, որ թարգմանելով Մսերյանի նամակը, Արեւիկայի այնտեղ կատարել է կրճատումներ ու հավելումներ: Ալամդարյանի մասին, որինակ, ավելացրել է հետևյալ արտահայտությունը, որ չկա նամակի հայերեն բնագրում. «des von uns so hoch geachteten und geliebten Vaters» (մեզանից խորապես հարգված ու սիրված հոր):

³ ԳԱԹ ԱԽԱ, № 125, թ. 66ա—67ր:

յանի տված ցուցմունքների մասին է, որի նախավերջին՝ հավելվածային պարբերության մեջ կարդում ենք.

«Դրանից քիչ ժամանակ անց հիշյալ պարոն Արուվյու կրկին ներկայացավ Լանդգերիխին և իր 22 տարեկան լինելու վերաբերյալ նախկինում տված ցուցմունքին ամենայն հնազանդությամբ ավելացրեց, որ այժմ նա ճիշտ և որոշակի չգիտի, թե իսկապես լրացել է իր 22 տարին: Սակայն իր ծնողներից, երբ նրանցից բաժանվում էր, իմացավ, որ <Պարոտին> ուղեկցելու ժամանակ ինքր 21 տարեկան էր, և այստեղից ելնելով պետք է որ նա հիմա 21 տարեկան լինի, բայց հնարավոր է, որ նա նոր է մտնում 22-ի մեջ»¹:

Այսպիսով, այս երբորդ վավերագիրը թևադրում է մեզ վերստին բնորոշել Արուվյանի ծննդյան իր իսկ նշած թվականը՝ 1809 թիվը, որ հաստատվում է նաև այլ վավերագրերով:

Օգտվելով առիթից, ուսումնասիրողների ուշադրությունն ենք հրավիրում նաև Խ. Արուվյանի այն երկերի վրա, որոնց բնագրերը հավանաբար պահվել են գերմանացի ճանապարհորդների արխիվներում, Դրանց հայտնաբերումն ու հրատարակումն, անշուշտ, նոր լույս պետք է սփռի Արուվյանի գրական ժառանգության վրա:

1. Ֆ. Բոդենշտեդի մոտ

ա) 1844 թվականի օրագիրը՝ „Nachträgen und Erläuterungen zu der Besteigung des Ararat durch Professor Abich“ վերնագրով:

բ) Քեշիշ-օղլու (աշուղ) երգերի գերմաներեն տողացի թարգմանությունները՝ ծանոթագրություններով հանդերձ:

գ) Նամակներ՝ գրված 1844—1848 թթ. ժամանակամիջոցում:

Հիշյալ նյութերը պետք է որոնել Վիսբադենում, ուր մինչև 1930-ական թվականները պահվել է Ֆ. Բոդենշտեդի արխիվը:

2. Ա. Հաֆստհուսուգենի մոտ

ա) Մանկապատանեկան օրերի հիշատակարանը (վերնագիրն անհայտ):

բ) Սի ոտանավոր (գերմաներեն տողացի թարգմանությամբ)՝ Հայաստանի ազատագրության առթիվ գրված:

գ) Հոդված ժողովրդական երգերի մասին (ուր վերապատմվել է նաև «Ասլի-Քյարամ» սիրավեպը):

դ) Նամակներ (սկսած 1843 թվականից):

3. Մ. Վազնեհի մոտ

ա) „Die Kurden“ և „Die Jesiden“ աղագրական ուսումնասիրության ձեռագիրը ժողովրդական երգերի հավելվածով:

բ) Նամակներ (սկսած 1843 թվականից):

Ս. Վազնեհի, ինչպես և Ա. Հաֆստհուսուգենի մոտ եղած նյութերի այժմյան տեղը մեզ հայտնի չէ:

4. Զ. Արիխի մոտ

ա) Օղերեւոթաբանական դիտողություններ (1846—1848 թթ.)

բ) Նամակներ (սկսած 1844 թվականից)

Անցյալ դարի 90-ական թվականներին Արիխի թղթերը եղել են Վիեննայում, ուր և, անշուշտ, պետք է գտնվեն նաև Արուվյանին վերաբերող նյութերը:

5. Կ. Կոխի մոտ

ա) Բացատրականներ՝ հայոց ազգային կերակուրների և հայոց երաժշտական գործիքների մասին:

Կ. Կոխի արխիվի պահպանման վայրը նույնպես հայտնի չէ մեզ:

II

Անցնում ենք նյութերի երկրորդ խմբին՝ Արուվյանին վերաբերող նորահայտ վավերագրերին:

Դրանց շարքում առաջին հերթին հարկ է հիշել ռուս հանրահռչակ բառարանագիր Վլադիմիր Դալի մոր, Լեզոբ և բրոշ օրագրերն ու նամակները, որոնք հայտարարել ենք Լենինգրադի

¹ LITFAJL, ֆ. 733, ց. 56, դ. 463, թ. 164:

Պուլիսիայի տան ձեռագրերի բաժնում¹։ Միայն բառարանագրի մոր՝ Յուլյա Դալի (ծնյալ Ֆրայտուգ) 1833—1834 թթ. օրագրերում Աբովյանի մասին կա շուրջ հարյուր գրանցում։ Դրանց վրա ենք ավելացնում նաև նույն Յուլյա Դալի՝ Աբովյանին ուղղված երկու նամակները (1835)։ Յուլյա Դալի օրագրերի արժեքը մեծանում է հատկապես նրանով, որ առայժմ գրանք միակ աղբյուրն են, որոնք ճշտված շատ ու շատ անծանոթ փաստական տվյալներ են հաղորդում Աբովյանի կյանքի 1833—34 թվականների շրջանի մասին, որոնց վերաբերյալ (հատկապես 1833 թ. կեսերից) հայ մեծ գրողն ինքը, ինչպես հայտնի է, շատ քիչ օրագրային գրառումներ է թողել։ Յուլյա Դալի օրագրերը պատմում են, որ Աբովյանն այդ տարիներին լրջորեն պարապել է երաժշտությամբ և իրանսերեն լեզվով, հաճախել է բանաստեղծ ժուկովսկու հորաբորո՝ Ե. Ա. Պոլոտսկովայի սալոնը, շփվել է դորպատյան նկարիչների ու երաժիշտների (Կ. Ջենֆ, Լ. Կիրխայզեն) հետ և այլն։

Նույնը կարելի է ասել և բառարանագրի եղբոր՝ Պաուլ Էմիլ Ալեքսանդր Դալի (1813—1836) օրագրերի մասին, թեպետ և նրա նոթերում քիչ են Աբովյանի անվան հիշատակությունները։ Մոր նման նա քախոս չէ։ Պ. Դալը պատմում է թեպետ առօրյա, սակայն հետաքրքիր խնդիրների, Աբովյանի ուղագրավ մտորումների մասին։ Պ. Դալին հետաքրքրել է անգամ Աբովյանի վերադարձը հայրենիք և նոր-նախիջեանում նրա հետ պատահած մի ճակատագրական դեպք։

Ուսումնասիրողներին առհասարակ շատ է զբաղեցրել Աբովյանի և Դորպատի համալսարանում դործող Բուրշենշաֆթ ուսանողական գաղտնի կազմակերպության փոխհարաբերության հարցը։ Պաուլ Դալը եղել է Բուրշենշաֆթի ակտիվ գործիչներից, ինչպես այդ պարզ երևում է նրա մի շարք ծածկագիր գրություններից։ Վերջինների մեջ հիշատակված է նաև նույն Պ. Դալի և Աբովյանի ընդհանուր ընկերներից մի ուրիշի՝ Ալեքսանդր Կարլ Լոկենբերգի անունը։ Այն հանգամանքը, որ Աբովյանը մտերիմ է եղել այս երկու բուրշենշաֆթականների հետ, ստացել է նրանցից նամակներ, արդյոք չի՞ ափսոսում այդ կազմակերպության նկատմամբ նրա ունեցած հետաքրքրության մասին։ Մենք այս ասում ենք հարցադրման կարգով։ Նոր հետազոտություններն, անշուշտ, ավելի պարզություն պետք է մտցնեն այս խնդրում։

Աբովյանին վերաբերող նորահայտ վավերագրերից նշանակալից արժեք են ներկայացնում նաև Դորպատի համալսարանի պրոֆեսորներ հանրաճանաչ Ֆ. Պարրոտի, պատմաբան Կ. Լ. Բլումի և քիմիկոս Ֆ. Գլոբելի անձնական նամակագրությունները։

Պարրոտի նամակներից երեքը վերաբերում են Արարատյան վերելքի ժամանակ Աբովյանի ցույց տված մասնակցությանն ու օժանդակությանը։ Աբովյանի մասին խոսելիս ամեն անգամ Գ. Պարրոտը նրան տալիս է ուղագրավ բնութագրումներ՝ «չափազանց կայտառ, հետաքրքրասեր երիտասարդ դպիր», «անդադրուն դպիր Աբովյան», իսկ մի գրություն մեջ էլ այսպիսի սողեր են նվիրված նրան. «Հուզմունքով էի հայացքս դարձնում երիտասարդ վանականի վրա, որը լավագույնի և վեհի նկատմամբ ունեցած մաքուր հետաքրքրությունից էջմիածնում միացել էր ինձ և հիմա, մի տեսակ սրբազան եռանդով, վանականի ծանր ու անհարմար տարազով, չնայելով ոչ մի դժվարության ու վտանգի, հոժարակամորեն ինձ հետ երկու անգամ ճանապարհ էր ընկնում։ Այդ երիտասարդն Արարատի վրա իմ անցկացրած մինչև վերջին վայրկյանն էլ մնաց իմ խմբի մեջ և իր բարեպաշտ ու բարեբարո վարվելաձևով Ձերք բարեձննդությունը պարտավորեցնում է, և, ինչպես ևս հավատում եմ, նորին մեծությունը պետք է ուշադրություն դարձնի այս երիտասարդի վրա՝ որպես Հայաստանի ժողովրդական կրթության արժանավոր մարդու»²։

Պարրոտի նամակներից մեկն էլ ուղղված է բանաստեղծ Վ. Ժուկովսկուն։ Մանոթացնելով նրան Աբովյանի անձի և Դորպատում ուսանելու նպատակների մասին, Պարրոտը խնդրում է, որ Վ. Ժուկովսկին պալատական շրջաններում դործը հարթի այնպես, որ ուսումն ավարտելուց հետո Աբովյանին չպարտադրվի պետական ծառայություն և հնարավորություն տրվի նրան հայրենիք վերադառնալու որպես ժողովրդական ուսուցիչ, ինչպես նաև բաց թողնվեն պետական միջոցներ՝ Վենետիկի Միսիթարյան վանքը մեկնելու համար³։

¹ Տե՛ս Վ. Դալի արխիվ, № 27.546/CXC VII 6. 12: 27.544/CXC VII 6. 10: 27.427/CXC VI 6. 12:

² Էստ. ՍՍԽ ՊԿՊԱ, ֆ. 402, դ. 1275, թթ. 195—195ա, 218—221, 252:

³ ՊՏ, Օնեգինյան հավաքածու, № 28.195/CII 6. 95:

Պակաս հետաքրքրական չէն նաև Կ. Լ. Բլումի նամակները, որ վերջինս ուղղել է ակադեմիկոս Խ. Ֆրենին: Այդ նամակներից տեղեկանում ենք, որ Աբովյանը հմուտ բանասեր Գուրգոս Վիլհելմ Վալտերի (1804—1831) հետ ձեռնարկել էր Խորենացու պատմությունը գերմաներեն թարգմանելուն, որ, սակայն, Վալտերի վաղաժամ մահվան պատճառով գլուխ չի եկել: Մի ուրիշ նամակում Կ. Լ. Բլումը խոսում է 1835 թվականին Հայաստանի մասին Աբովյանի գրած մի շարք մեծարժեք հոգովածների մասին. որոնք նախատեսված են եղել Դորպատի Համալսարանի տարեգրքում տպագրության համար և մեզ անծանոթ պատճառներով լույս չեն տեսել:

Եթե Ֆ. Պարրոտն ու Կ. Լ. Բլումը ծանոթ գեմբեր են ուսումնասիրողների համար, ապա բրիտիկոս Ֆրիդման Գյոբելը (1794—1852) նոր գեմբեր է Աբովյանի ծանոթների շրջանում: Նա եղել է փայլուն գիտնական և դեռ նույն Գյոբելի համալսարանում ուսանելիս հովանավորվել է Վ. Գյոթեի կողմից: Աբովյանի անվան հիշատակությունը Ֆ. Գյոբելի նամակներում, որպես սիրելի բարեկամի, այս առումով արժանի է ուշադրության:

III

Նոր ուսումնասիրված նյութերի և քերականության խումբը լուսաբանում է Աբովյանի և էստոն գործիչների փոխադարձ կապերը: Հարկ է նախապես զգուշացնել, որ այս խնդրում ոչ այնքան նոր նյութեր են հայտնաբերված, որքան հեղինակի գորսպատյան օրագրերում եղած փաստերին նոր լուսաբանություն է տրված:

Բնական հայտնի է, իր կյանքի գոյապատյան տարիներին Աբովյանը շփվել է բազմաթիվ անձնավորությունների հետ, շատերից նամակներ ստացել, շատերին գրել: Եվ, զժախտաբար, ցարդ պրանց մեծ մասի ով և ի՞նչ լինելը մեզ հայտնի չէ:

Նյութերի ամենամեծ քանակությունը վերաբերում է Աբովյանի և էստոնական ժողովրդի նշանավոր գավակ, ուղղորդիչական լեզուների խոշոր հետազոտող ակադեմիկոս Ֆերդինանդ Յոհան Վիլհելմանի (1805—1857) փոխհարաբերություններին: Այս խնդրի շուրջ արտահայտվել է նաև ժամանակակից էստոնական բանասերներից ակադեմիկոս Պաուլ Արիստեն, որը հրատարակել է Ֆ. Յո. Վիլհելմանի հիշողություններից մի քաղվածք¹: Ֆ. Յո. Վիլհելմանի հիշողությունների ամբողջական բնագրի բնթղթում (Տարաուի Ֆ. Կրեյցվալդի անվան գրական թանգարանի ձեռագրերի բաժնում) մեզ տրամադրեց մի երկրորդ հատված ևս, որը որոշ լրացումներ է մտցնում նախորդի մեջ: Ավելորդ չենք համարում երկուսն էլ բերել ստորև.

1. «Մի ուրիշ արևելյան լեզվի <ուսումնասիրության> համար էլ լավագույն հնարավորություն բնձնեցե՛ք,— գրում է Ֆ. Յո. Վիլհելմանը,— ես ծանոթություն հաստատեցի մի երիտասարդ հայի՝ Աբովյանի հետ, որն ուղեկցել էր Պարրոտին նրա ճանապարհորդության ժամանակ գեպի Արարատ, նրա հետ Դորպատ եկել և նրա հսկողության ներքո ուսանում էր այստեղ: Նա արդեն միանգամայն լավ հասկանում էր գերմաներեն և, որպես նախկին հոգևորական, կարողանում էր հիմնավորապես դասավանդել հայոց գրաբար լեզուն: Ժողովրդական լեզուն ևս մասամբ սովորեցի ավելի ուշ, երբ մեքայում ավազ ուսուցիչ էի, մի երիտասարդ հայից, որին ևս քննեցի տարրական գարեջրի ուսուցչի կոչման համար: Աբովյանը նաև բանաստեղծ էր, և ևս նրանից ունեմ բացի մի ինքնուրույն բանաստեղծությունից «Մասիս» (Արարատ) վերնագրով, նաև Գյոթեի «Անառիկ աշխարհ» («Erikonig») և Ծիլլերի «Տոգենբուրգի ասպետ» («Kitter Toggenburg») պոեմական թարգմանությունները: Ավելի ուշ մի անգամ էլ նա այցելեց ինձ Միտավայում, որպես Պարրոտի ուղեկից՝ վերջինի վերաբնակության ուղևորության միջոցին»:

2. «Երբ պրոֆ. Ֆրիդլենդերը մի անգամ, որպես վերաբնիչ, եկավ այստեղ (Միտավա— Պ. Զ.), նա իր հետ բերեց իմ բարեկամ հայագի Աբովյանին, որը, բնականաբար, ապրում էր ինձ մոտ, քանի դեռ Ֆրիդլենդերը Միտավայում էր»:

¹ ԳԱԱԱ, ֆ. 778, ց. 2, № 29, թ. 7բ, 13, 15—17բ:

² F. Gobel, Briefe aus alter Zeite, Jurjew (Dorpat), 1902, էջ 149:

³ Տե՛ս «Edasi» (լրագիր), 1955, հոկտեմբերի 18, № 206 (էստոներեն լեզվով): Նույն հարցին է նվիրված նաև Պ. Արիստենի էստոնական «Keel ja Kirandus» (Լեզու և գրականություն) ամսագրի 1959 թ. № 9 (էջ 544—546) տպագրած մի ուրիշ հոդված⁴։

⁴ F. J. Wiedemanni ja Haisatur Abovjani suliteise» (էստոներեն լեզվով):
⁵ Ferd. Joh. Wiedemann, Nachrichten und Aufzeichnungen von und über Personen meiner Verwandtschaft. Erinnerungen aus meinem Leben, zusammengetragen St. Petersburg 1858 uf f. (ձեռագիր), Ֆ. Կրեյցվալդի անվան Գրական թանգարանում (Տարաու), էջ 172 և 190:

Ինչ ևն հետևում այս քաղվածքներից: Նախ՝ Ֆ. Յո. Վիդեմանի հետ հանդիպելու ժամանակ Աբովյանը շատ լավ հասկացել է գերմաներեն: Այսպես՝ Աբովյանն իր ինքնուրույն երկերից Ֆ. Վիդեմանին հանձնած է եղել «Մասիս» (ճիշտ վերնագիրը՝ «Ներկայություն ի վերայ ճանապարհորդության ի լեռն Մասիս, ի 1829-ին ի 27 սեպտեմբերի» — Պ. Հ.) բանաստեղծությունը: Վերջապես՝ Աբովյանը երկու տարբեր անգամներ այցելել է Ֆ. Յո. Վիդեմանին: Միջանկյալ նկատենք, որ Է. Դ. Ֆրիդլենդերի հետ այցելելու մասին կան ուրիշ տվյալներ ևս, բայց Ֆ. Պարրոտի հետ Միտավա ուղևորվելու մասին ոչ մի ուրիշ փաստ, բացի վերոհիշյալից, հայտնի չէ:

Ինքնաստիճանի հետաքրքրական լինելով հանդերձ, այնուամենայնիվ Աբովյանին վերաբերող Ֆ. Յո. Վիդեմանի այս հաղորդումների մեջ նկատվում է մի պակաս՝ ժամանակագրության իսպառ բացակայությունը: Այստեղ է, որ օգնության ևն գալիս Աբովյանի օրագրերն ու Ֆ. Յո. Վիդեմանից ստացած նրա նամակները, որոնց (հատկապես վերջինների) մասին բանասերներն անհրաժեշտ տեղեկություններ չունեն:

Ինչպես ցույց են տալիս օրագրերը, Աբովյանն ու Ֆ. Յո. Վիդեմանը ծանոթացել են 1830 թվականի դեկտեմբերի վերջին օրերին, Դորպատում: Հաջորդ՝ 1831 թվականի ամռանը (հուլիսի 24-ից հուլիսի 31-ի միջև, որոշակի օրերը հայտնի չեն) մեկ ամիս Ֆ. Յո. Վիդեմանը Աբովյանի մոտ սովորել է հայոց լեզու¹: Այս տնական հանդիպումներն ավելի են մոտեցնում Աբովյանին և Ֆ. Յո. Վիդեմանին, ևս էլ ասել մի առիթով Ֆ. Յո. Վիդեմանն Աբովյանին, թե «Սուր ևն միջոց լինելոյ Ձեր աստ, այլ բարեկամություն մեր եղիցի երկայն»²:

Երկրորդ անգամ նրանք հանդիպել են 1831 թ. դեկտեմբերի 26-ին, դարձյալ Դորպատում և տասն օր անցկացրել միասին՝ վերսկսելով հայոց լեզվի իրենց պարապմունքները, իբրև ձեռնարկ ընտրելով Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» մատյանը: Այս հանդիպումների ժամանակ է, որ Ֆ. Յո. Վիդեմանը խորհուրդ է տվել Աբովյանին կազմելու գերմաներեն-հայերեն բառարան, գրուցել է նրա հետ լեզուների զարգացման, փոխազդեցությունների և հայոց լեզվի մասին: Հիշյալ գրույցի կարևորագույն կետերն Աբովյանը համառոտ վերաշարադրել է իր օրագրում: Դրանք ցույց են տալիս, որ Աբովյանի օգնությամբ ուսանելով հայերեն, Ֆ. Յո. Վիդեմանը իր բնական տաղանդի շնորհիվ կարողացել է խորանալ հայոց լեզվի կական առանձնահատկությունների մեջ, բայց արժանվույն գնահատելով հայերենի բառապաշարի հարստությունն ու բառակազմական հնարավորությունները:

Ֆ. Յո. Վիդեմանի նամակները մեզ պատմում են այն լուրջ հետաքրքրության մասին, որ նա հետազայում շարունակում էր պահպանել հայոց լեզվի, հայ մատենագրության և հայագիտության նվաճումների ուսումնասիրության ուղղությամբ: Հուզիչ ևն հատկապես Աբովյանին ուղղված Ֆ. Յո. Վիդեմանի հետևյալ տողերը. «Դուր շատ բարի եր իմ նկատմամբ, այնպես որ ևս չգիտեմ, թե ինչով եմ արժանացել զրան և թե ինչպես կարող եմ փոխարենը հատուցել Սեր ծանոթությունը, որ իսկապես միայն ինձ կարող էր օգուտ և բավականություն պատճառել, Դուր էլ ևս արամադիր Ձեզ համար բախտավորություն համարելու: Իհարկե, ինձ էր վայել արդեն շատ վաղուց Ձեզ նամակ գրելու և ոչ թե խախտապահվելու՝ Ձեզանից ստանալով առաջին նամակը, սակայն միշտ էլ ևս ձգձգում էի, որպեսզի կարողանայի Ձեզ անակնկալի բերել հայերեն նամակով: Բայց այժմ գործերիս շատության և մասնավոր դասերիս պատճառով ևս չեմ կարողացել ժամանակ գտնել հայերենով այնքան զբաղվելու, որքան ևս կցանկանայի և որքան հարկավոր կլիներ այդ լեզվով մի նամակ գրելու համար: Այդ պատճառով էլ ևս այժմ բավա-

¹ Այդ և հաջորդ տարին Աբովյանը հայերեն է ավանդել նաև համալսարանի պրոֆեսոր Յուլիուս Պիրս Էրնեստ Հերման Վալտերին (1794—1834), սրա եղբորը՝ բանասեր Փիլիպ Վիլհելմ Վալտերին (1804—1831), համալսարանի ուսանող Էրնեստ Ադոլֆ Հերման-նին (1812—1884) և համալսարանի ապագա պրոֆեսոր Թեոդոր Գրասին: Է. Ա. Հերմանը հետագայում եղել է նրա ինքնավար պատմության պրոֆեսոր, էստոնական գիտական ընկերության պատվավոր անդամ: Ունի հայագիտական մի աշխատություն ևս՝ «Das Russische Armenien von armenischer Schriftstellern geschildert», տպված՝ «Dorpat er Jahrbücher» հանդեսի IV հատորում (տե՛ս Կ. Կոստանյանի «Հայագիտությունը Արևմտյան եվրոպայում» գիրքը):

² ԽԱ ԵԼԺ, VI, էջ 120:

³ ԽԱ ԵԼԺ, VI, էջ 91—92 և 97—98:

րարվում եմ գերմաներեն նամակով և, տեսնենք, գուցե ապագայում կարողանամ մի հայերեն նամակ գրել»¹։

Ֆ. Յո. Վիդեմանը չի մոռանում Աբովյանին տված իր խոստումը՝ հայերեն լեզվով նրան նամակ գրելու մասին։ Նրա մի քանի հետաքրքրական գրաբար տողերը (դժբախտաբար՝ անթվակիր) սլաճպանվել և հասել են մեզ։ «Ի վաղուց եղև յիս գիտաւորութիւն՝ գրել տո քեզ, սիրելի բարեկամ իմ, սակաւ ինչ ծիրս հալերէն, առ ի ցուցանել քեզ թէ դեռես ո՛չ մոռացայ զքեզ և զայն լեզու, որ դու դիս ուսուցէր։ Եթէ բազմութիւն վրիպակաց գտանես յայս նամակիս, ներեսցես ինձ, վասն զի ո՛չ կարէի հարցանել զխորհուրդ քո։ Ինձ անհասն է թէ ոչինչ զքէն լուայ յետ քան...»։ Այստեղ ընդհատվում է Ֆ. Յո. Վիդեմանի այս իսկապես պարզ և գրեթե անսխալ գրաբարով ու գեղեցիկ ոճով գրած նամակը²։ Ո՛չ մի կասկած չի մնում, որ նա լավ է տիրապետել հայերենին։

Պակաս հետաքրքրական չեն նաև Աբովյանի և Դ. Հ. Յուրգենսոնի փոխհարաբերությունները։ Աբովյանի դուրսդուրած օրագրերում վերջինիս անունը հիշվում է Իրգենզոն, Էրգենզոն ձևերով, և այդ պատճառով նրա անձն ու գործը մինչև այժմ վրիպել էին ուսումնասիրողների ուշադրությունից։ Դիտրիխ Հայնրիխ Յուրգենսոնը (1804—1844) էստոնական ականավոր մանկավարժներից է։ Նա է դեկավարել Տարտուի տարրական ուսուցչական սեմինարիան, վերջինի հիմնադրման օրից (1828) մինչև իր մահը (1841 թ. օգոստոսի 10) և 13 տարիների ընթացքում պատրաստել է շուրջ հիսուն ուսուցիչներ ու դաստիարակներ՝ էստոնիայի և մերձբալթյան մյուս ժողովուրդների համար։ Դ. Հ. Յուրգենսոնը մի քանի տարի (1837—1841) էստոնիայում է դասավանդել նաև Տարտուի համալսարանում։ Եղել է էստոնական գիտական ընկերության հիմնադիրներից մեկը և առաջին քարտուղարը։ Իր օգտակար խորհուրդներով նա աջակցել է նաև խաչատուր Աբովյանին՝ ժողովրդական ուսուցչի փորձն ու գործը յուրացնելու, մանկավարժական տեսական ու գործնական գիտելիքներ ձևաբերելու գործում։ Անառարկելի է, որ Դ. Հ. Յուրգենսոնի դասավանդման որոշ մեթոդներ, հատկապես ուսուցչի և աշակերտների փոխհարաբերության նրա սկզբունքները, Աբովյանն օգտագործում էր հետագայում, Տփղիսում հիմնադրած իր մասնավոր պանսիոնում, աշակերտների հետ ունեցած հանապազօրյա շփման, նրանց հետ պարապելու ժամանակ³։

Երկու սեմեստր (1831 թվականի երկրորդ և 1832 թ. առաջին), նախապես որոշված օրերին, Աբովյանը հաճախել է Դուրպատի տարրական ուսուցչական սեմինարիան, հետամուտ լինելով զլիսավորապես երեք առարկայի՝ պատմության, թվաբանության և երգեցողության։ Առաջին երկու առարկաներից պատրաստվելով մասնավոր կարգով, Աբովյանը սեմեստրի վերջերին ստուգման է ենթարկվել Դ. Հ. Յուրգենսոնի մոտ, իսկ երգեցողության դասերին, սեմինարիայի մյուս սաների նման, հավասար մասնակցություն է ունեցել։

Դ. Հ. Յուրգենսոնից Աբովյանը սովորել է նաև տեսական և գործնական մանկավարժություն, հատուկ հետաքրքրություն ցուցաբերել նրա դասավանդման կարգի նկատմամբ։

Ի պատիվ Դ. Հ. Յուրգենսոնի պետք է խոստովանել, որ նա մեծագույն մարդասիրությամբ է ընդունել իր հայ սանին, հաճախակի հրավիրել է նրան իր տունը, գրուցել հետը, հյուրասիրել, քաջալերել՝ առարկաների և արհեստների մեջ ցույց տված հաջողությունների համար, երբեմն էլ հարցուփորձ է արել Հայաստանի ու հայ ժողովրդի վիճակի մասին, կարեկցել, մխիթարել և ոգևորել։

¹ Դիվան Խաչատուր Աբովյանի, II, էջ 116—117 (հետագայում՝ Դ)։ Ցավով պիտի նշել, որ թեպետ այս տողերը հրատարակված են եղել տարիներ առաջ, սակայն չի նշվել նրանց հեղինակի ով լինելը։ Ֆ. Յո. Վիդեմանի անվան սկզբնատառի (F) սխալ ընթերցումը (H) թյուրիմացության տեղիք է տվել։

² Ընագիրը պահվում է ԳԱԹ ԱՊԱ, № 366։ Այս նամակը թեպետ անստորագիր է, սակայն նրա ձևագրի և 1832 թ. ապրիլի 16-ին Աբովյանին ուղղված Ֆ. Յո. Վիդեմանի նամակի մեջ եղած մի քանի հայերեն բառերի տառաձևերի համեմատություներ անկասկած է գարծնում, որ այն Ֆ. Յո. Վիդեմանի ձեռքով է գրված։ Գրության ժամանակը համեմատյալ դեպք 1833 թվականից առաջ չէ։

³ Համեմատիր իսկ ԵԼԺ, VI, էջ 112 և 117։ «Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին», Երևան, 1941, էջ 107—108 և 113։ H. Lange, Das Erste Dorpat'sche Lehrer-Seminar; Dorpat, 1890, էջ 11 և 160։

Աբովյանը անկեղծորեն հարգել ու սիրել է նրան և նրա մասին արտահայտվելիս մի առիթով ասել. «Ուսուցիչ իմ Բրգենզոն՝ այդ հեղափոխության»:

Յակոբ Յոնսոնը (1806—1865) Լատնացի ականավոր գիտնական է: «Փիլիսոփայության դոկտոր և ագրոնոմիայի մագիստրոս» գիտական կոչումներով է միշտ հիշատակվում նրա անունը: 1829—1833 թթ. Յ. Յոնսոնը սովորել է Դորպատի համալսարանում իբրև տնտեսագիտության ուսանող: Զբոլած լինելով հայրենի էստոնիայում աշխատելու հնարավորությունից, ուսումնալսարանից հետո նա տեղափոխվել է Պետերբուրգ և անցել դիտական-հրապարակախոսական գործունեության: Երկար տարիներ նա խմբագրել է Պետերբուրգի Կայսերական ազատ տնտեսագիտական ընկերության պարբերականը: Գրել է գյուղատնտեսության էկոնոմիկայի հարցերին նվիրված բազմաթիվ արժեքավոր աշխատություններ:

Յ. Յոնսոնի հետ Աբովյանի ծանոթության ճշգրիտ տարին ու օրը հայտնի չեն: Առայժմ պարզված չեն նաև մանրամասնություններ նրանց հանդիպումների ու գրույցների մասին: Մեզ հասել է Յ. Յոնսոնի միայն մի հրաժեշտի թերթիկը՝ հանձնված Աբովյանին 1833 թվականի մարտի 9-ին, Յ. Յոնսոնի Դորպատը թողնելու նախօրեին: Ահա այն ամբողջությամբ.

Մարդու գրախոս — իր սիրտն է.

Ինչ քաղում է սերն աչք պարտեզում

Վարդեր ու հասմիկներ են՝ պսակի, խաղերի և կատակների համար.

Բայց ախ, շուտով կորցնում են բույրն ու թառամում:

Եվ միայն այն, ինչ ծաղկում է շողերի տակ բարեկամության,

Կենսունակ է և սնունդ՝ ժամանակի ու հավիտենականության:

Հուշաթերթերն անցած օրերի վկաներն են,

Ա՛րդ, խոսի՛ր, թերթիկ, երբ նվաղում է ձայնը:

Ձեր անկեղծ բարեկամ

Յակոբ Յոնսոն

Դորպատ

9-ն մարտի

1833²:

IV

Հնօրյա պարբերաթերթերի և տեղեկատու հրատարակությունների ընթերցումը հնարավորություն ընձեռեց պարզելու մեկ ուրիշ հարց ևս՝ Աբովյանի և գորպատյան երաժիշտների փոխհարաբերությունը, ինչպես նաև նրա մի քանի երաժիշտ ծանոթների ո՛վ և ի՛նչ լինելու Դեռևս 1848 թվականին վաստակավոր բանասեր Ե. Շահազիզը հրատարակել էր ոմն Տարրոբի նամակը Աբովյանին՝ հայոց շարականները եվրոպական ձայնանիշերով եղանակավորելու վերաբերյալ: Դժբախտաբար, նամակագրի անունը աղավաղված էր թյուրիմացաբար, և բուն հեղինակի ով լինելը երկար ժամանակ մնացել էր հանելուկային:

Նամակի գոթատառ բնագրի, ինչպես նաև Լատնական երաժշտության պատմության ակադեմիկոսների կյանքի և գործի ուսումնասիրությունը հանգեցրեց այն եզրակացության, որ Աբովյանի այդ բարեկամը ժամանակի ականավոր երաժիշտ Յոհան Ֆրիդրիխ Բինեֆալ դե լա Տրոբն (1769—1845) է: Նույն նամակում հիշվում է մի երկրորդ անուն ևս: Դա էլ էստոնական երաժշտության պատմության մեջ մեծ դեր խաղացած և հոգևոր ու աշխարհիկ երաժշտության հմուտ գիտակ էմիլ Էռնեստ Հայնրիխ Հյորշելմանն է (1810—1854), կոմպոզիտոր Յ. Ֆ. Բ. դե լա Տրոբի սանը:

Ցանկանալով խմբական երգիչությունների համար հայոց շարականների եղանակները գրի առնել տալ եվրոպական ձայնանիշերով, Աբովյանը երգել է զբաղեցրեց մեկը հիշյալ է. է. Հ. Հյորշելմանի մոտ, և վերջինիս գրառումը ներդաշնակման համար հանձնել լա Տրոբին: Վերջինս հանգամանորեն ուսումնասիրելով շարականի մեղեդին և վախճանով աղավաղել այն, հրաժարվել է կատարել Աբովյանի ցանկությունը: Շարականը, որի մասին խոսեցինք, սկսվում է «Այս հարկ եուրանաց ուխտի տևառն տաճարիս» բառերով: Նրա ամբողջական բնագիրը գտանք Դորպատի համալսարանի գրադարանին Աբովյանի նվիրած ձեռագրում, իսկ է. է. Հ. Հյորշելմանի ձայնագրած թերթը այժմ պահվում է Աբովյանի արխիվում⁴:

¹ ԽԱ ԵԼԺ VI, էջ 117:

² ԳԱԹ ԱԽԱ № 488ա, թ. 11:

³ ՏԵՍ Դ, II, էջ 131—132:

⁴ ԳԱԹ ԱԽԱ № 100, է. Հյորշելմանի և լա Տրոբի մասին մանրամասնությունները տե՛ս E. Arró, Geschichte der Estnischen Musik, B. I. Tartu, 1933, էջ 29 և հետևյալները:

Արժանի երամիշտ բարեկամներից ուշադրության արժանի են նաև ժամանակին մեծ հռչակ ունեցած երամիշտ-երգահան Յոհան Բենիամին Գրոսը (1809—1849), դաշնակա-հարուհի Ռոզալյա Կիրխայզենը (1817—?), որը տասնմեկ տարեկան հասակից Գորպատում և Ուիգայում փայլուն համերգներ է տվել և հմայել ունկնդիրներին. խմբավար Յոզեֆ Ամադեուս Կոլրայֆը (1806—1837):

Ինչպես հուշում են որոշ աղոտ տվյալներ, Յ. Բ. Գրոսի միջոցով Արժանի գրի առնել է. լավել հայ ժողովրդական երգեր, որոնք հետագայում (1840) ներկայացրել է Պետերբուրգի Գիտությունների ակադեմիային: Ու. Կիրխայզենից Արժանի արխիվում մնացել է մի հրաժեշտի թերթիկ. դաշնակահարուհուն ցավ է պատճառել հայ բարեկամին ճանապարհելը, և խնդրել է. նրան՝ չմոռանալ իրեն:

V

Վերջին տարիների մեր պրպտումները ցույց են տալիս, որ Արժանի հատորներում տեղավորված երկերից (հատկապես՝ բանաստեղծություններից) մի քանիսը նրա հետ ոչ մի առնչ-չություն չունեն: Այդ դործերի արտագրությունները (իհարկե, ոչ Արժանի ձեռքով) ինչ-ինչ առիթներով բնկել են Արժանի թղթերի մեջ, և նրա երկերի հրատարակիչները մտքեր են դրանք ակադեմիական հրատարակության առաջին հատորի մեջ: Թվենք դրանցից մի քանիսը.

1. «Յազատութիւն Հայաստանայց» — Այս բանաստեղծության քննությունից ակնհեր է դառնում, որ նրա հեղինակն է հայր Եփրեմ Սեթյանը: Գրված է Կարինում, 1830 թ. հունվարի 19-ին և նվիրված է Խաչատուր բեկ Շահնազարյանին, Արժանի աշակերտ Գևորգ Շահնա-զարյանի հորը, որի դավթարից է քաղված է այն:

2. «Լիզա յաութ մի հանդարտիկ նստիւ...» — Քաղված է դարձյալ Խաչատուր բեկ Շահ-նազարյանին պատկանող դավթարից, գրված է նույն ձեռագրով, ինչ նախորդ բանաստեղծու-թյունը և Արժանի հետ ոչ մի կապ չունի:

3. «Տաղ ուրախութեան» — Մ. Թաղիադյանի նույնանուն ստեղծագործության տարբերակ-ներից մեկն է, արտագրված անձանթ ձեռքով: Ակրոստիքոս: Բանաստեղծության տների և առաջին տողերի առաջին տառերը հսկում են «Մեսրոպը» անունը:

4. «Ուրախ լիւր, ցնծայ մայր ուսումնարան...» — Դարձյալ Թաղիադյանի նույնանուն բա-նաստեղծության տարբերակներից մեկն է, որ ապագրվել է հեղինակի մահվանից հետո՝ «Եղե-րեգութիւն յօրհաս Թանկայ Թաղիադանց» ժողովածվում (Թիֆլիս, 1893, էջ 60): Արտա-գրությունը գտնվում է նախորդի հետ միևնույն թերթի վրա: Երկու տարբերակներն իրար հա-մեմատութիւն ունեն ակնհայտ ալլորնթերցումներ, որոնք կարևոր են Թաղիադյանի ստեղծա-գործական փորձի ուսումնասիրման համար, բայց ոչ երբեք Արժանի:

5. «Ոսկիլէն պտակ գլխոյ մերոյ քաղ...» — Արտագրությունը գտնվում է Թաղիադյանի գրչին պատկանող նախորդ երկու բանաստեղծությունների հետ միևնույն թերթի վրա: Դա էլ թելադրում է, որ այդ ևս Արժանի գրչին չի՝ կարող պատկանել, եթե անգամ Թաղիադյանի ստեղծագործությունն էլ չլինի:

6. «Քաղմերախո ուսուցիչ» — Բանաստեղծության ձեռագրի⁶ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն գրված է Խ. Արժանի պանսիոնի աշակերտ Գևորգ Աքիմյանի ձեռքով և նվիրված է իբրև սիրելի բարերարին՝ Արժանին:

Վերոհիշյալ վեց բանաստեղծություններն էլ առհասարակ պետք է դուրս հանվեն Արժանի երկերի ցանկից:

¹ Ձեռագիրը՝ ԳԱԹ ԱՌԱ ԱՅ 157, տպագրված է՝ ԱՌԱ ԵԼԺ 1, էջ 52—54:

² Նույն տեղում, տպագրված է՝ Ն. տ. էջ 312:

³ Նույն տեղում, ԱՅ 73, տպագրված է՝ Ն. տ. էջ 250, նախնական տարբերակը՝ «Աղ-գասեր», 1845, էջ 55:

⁴ Նույն տեղում, տպագրված է՝ Ն. տ. էջ 249:

⁵ Ձեռագիրը՝ ԳԱԹ ԱՌԱ ԱՅ 73, տպագրված է՝ Ն. տ., էջ 311:

⁶ Տե՛ս ԳԱԹ ԱՌԱ ԱՅ 103, տպագրված է՝ Ն. տ., էջ 201:

⁷ Սրանց վրա պետք է ավելացնել նաև «Ուղղուցիչ մերոց կարեաց...» սկսվածքով (խսկական վերնագիրը՝ «Ուր արարելը դիս ի պատկեր...») ոտանավորը (տե՛ս ԱՌԱ ԵԼԺ, 1, 58) որ, ինչպես ցույց են տվել Մնացականյանն ու Շ. Նազարյանը, Պաղտասար Դպրի հեղինակությունն է (տե՛ս Պաղտասար Դպրի, Տաղիկներ սիրոյ և կարոտանաց, Երևան, 1958, էջ 158—159, 253):

Ուրիշ երկր բանաստեղծություններ, այն է՝ «Հանգստություն», «Սիրելի բուռն ուզվա հանգստություն անհատ առ առ...» և «Լաուրայ»¹, պետք է փոխադրվեն թարգմանությունների շարքը, բանի որ երկրն էլ պատկանում են գերմանական բանաստեղծ Հյուլտի գրչին և Աբովյանի կողմից թարգմանված են հարազատությամբ: Այդ է հաստատում նրանց բաղդատությունը Հյուլտի բանաստեղծությունների 1783 թ. համարագրյան հրատարակության հետ: Առաջին երկուսը հայերեն են թարգմանված ամբողջովին, իսկ «Լաուրայ» բանաստեղծությունը՝ կիսատ (բաց են թողնված վերջին 4 տները):

Վերջին տարիներս համառությամբ Աբովյանին են վերագրում նաև մի ուրիշ գործ՝ «Краткие правила для словесного употребления языка Тюрки (татарского), на коем говорят во всем Закавказском крае, в Азербайджане и почти во всей Персии»³. Այս գործի շուրջը գրում են ու վիճում, քննադատում ու դրվատում Աբովյանին: Ոմանք մինչև իսկ հայտարարում են, թե այդ երկի ինքնագիրը գրված է Աբովյանի ձեռքով: Հարցն այն է, որ ոչ մեկն էլ հիշյալ երկը բանասիրական առումով քննության չի՝ ենթարկել: Միակ փաստը, որից նրանք կառուցում են, այն է, որ իբրև թե այդ գործը կազմված է համեմատական մեթոդով, և նրա ձևագիրը մնացել է Աբովյանի արխիվում: Բայց Աբովյանի արխիվում ուրիշ շատ նյութեր էլ կան, որոնց ոչ մեկի հեղինակն ինքը չէ: Այդ դեպքում դրանք էլ վերագրվել նրան... «Краткие правила»-ն մեկնումիշա պետք է հանել Աբովյանի երկերի ցանկից՝ հետևյալ պատճառներով.

ա) Աբովյանի ձևագրով չի գրված այս աշխատությունը, և նրա կողմից այդպիսի երկ գրած լինելու մասին ոչ իր իսկ Աբովյանի և ոչ էլ ժամանակակիցներից որևէ մեկի մոտ առհասարակ ոչ մի վկայություն և անգամ, հարևանների ակնարկ չկա: Աբովյանին հատկանշական շեղումների և ծանոթությունների հետքն անգամ այստեղ չկա:

բ) «Краткие правила»-ի սկզբում վրա, որ մարտը արտագրություն է հետազատում կատարվել են առանձին ուղղումներ ու լրացումներ՝ անշուշտ աշխատության հեղինակի կողմից: Վերջիններս նույնպես Աբովյանի ձեռքով չեն կատարված: Հնդհակառակը, դրանց գրությունը շատ է հիշեցնում Թեֆլիսի դիմնագրայի 1838—39 թվականների թուրքերեն լեզվի ուսուցիչ Դեմենտի ձեռագիրը:

գ) Թուրքերեն լեզվի այդ քերականության ամբողջ տերմինաբանությունը, բառերի գրության ձևն ու տառադարձությունը խորթ են Աբովյանի ոճին: Աբովյանի այլևայլ երկերում էլ կան տասնյակ թուրքերեն բառեր, որոնք միանգամայն այլ սկզբունքներով են գրված: Օրինակ, Աբովյանը երբեք չի օգտագործել «язык тюрки» տերմինը. նրա ուսուցիչ երկերում դրա փոխարեն միշտ և ամենուրեք հանդիպում ենք «татарский язык» ձևին:

դ) Քերականության մեջ եղած մի բանի բառերից ու արտահայտություններից «шегр—город», «илъхи-чи-табунчик», «Петр Иванден яхши дюр» (Պյոտրը Իվանից լավ է), «Кушкн лялякн» (Թռչունի փետուր) և այլն (§ § 4, 7, 8) ականք է դառնում, որ նրանց գրողը ոչ միայն Աբովյանը չէ, այլև, առհասարակ, Անդրկովկասում ծնված անձնավորություն էլ չէ: Այդ ձևերը կարող էր օգտագործել միայն ռուս կամ օտարազգի որևէ մարդ, որը նոր է ուսանում թուրքերեն:

ե) Այս աշխատանքը գրված է ռուսներին թուրքերեն ավանդելու համար, և ոչ թե աղբյուրներից և քերականության մասերի լեզու սովորեցնելու, մի բան, որ Աբովյանի հիմնական նպատակը պետք է լիներ, էթն իսկապես նա դրեր մի այդպիսի գործ:

զ) «Краткие правила»-ի մեջ եղած առանձին ֆրանսերեն արտահայտությունները հուշում են, որ աշխատությունը բաղված պետք է լինի մեզ անծանոթ որևէ ֆրանսերեն գրքից (համառ. § § 5, 8, 11, 18, 34 և այլն):

Իհարկե, չափազանց հաճելի կլիներ. էթն Աբովյանը գրած լիներ եղբայրական աղբյուրանական ժողովրդի համար քերականության ձևանարկ. բայց որ չի դրել՝ դա նրա հանցանքը չէ,

¹ Տե՛ս ԽԱ ԵԼԺ, I, էջ 125, 129—130:

² L. H. Ch. Hölty, Gedichte, Hamburg, 1783, էջ 67—69 («An den Ruhe»), 80—81 («An den Kanerinvogel»), 97—99 («Laura»).

³ ԳԱԹ ԱԽԱ, № 28: Այդ գործի ռուս-միասիրողներից են պրոֆ. Գ. Անտոնյանը («Հայ և աղբյուրանական ժողովրդի գրական կապերը», Բաքու, 1955, աղբյուրներն), Ա. Սեյդ-Ջադեն («Связи Хачатура Абовяна с передовыми представителями Азербайджана XIX в.», Տե՛ս «Известия АН АзССР», 1956, № 3, առանձին գրքով՝ ընդարձակած «Хачатур Абовян и его связи с передовыми представителями Азербайджана XIX в.», Баку, 1960) և ուրիշներ:

և հարկ էլ չկա ուրիշի գործը նրան վերագրել և անհարկի գովել ու քննադատել, ինչպես անում են որոշ գրականագետներ:

VI

Մենք մինչև օրս քիչ ենք զբաղվել Արուվյանի վերաբերյալ ժամանակի մամուլում եղած նյութերի հավաքման խնդրով: Այնինչ այս բնագավառում էլ հնօրյա պարբերաթերթերի ստվար հավաքածուները շատ հետաքրքրական տվյալներ կարող են ընձեռել: Չպետք է անտեսել և այն նպաստավոր հանգամանքը, որ այստեղ ուսումնասիրողից պահանջվում է ոչ այնքան հմտություն, որքան գործի նկատմամբ սեր և համբերություն:

Անցյալ տարվա որոնումների ժամանակ հնարավորություն ենք ունեցել ծանոթանալու „Dorptsche Zeitung“ («Դորպատյան լրագիր») „Dorptser Jahrbücher für Litteratur, Statistik und Kunst“ («Դորպատյան տարեգրքեր գրականության, վիճակագրության և արվեստի») և „Allgemeine Jenaische Literatur-Zeitung“ («Ենայի ընդհանրական գրական թերթ») պարբերաթերթերի մի քանի տարեգնացքների հետ:

«Դորպատյան տարեգրքեր գրականության, վիճակագրության և արվեստի» պարբերականի երկու գրքերն (I և III) են հետաքրքրական: Առաջին գրքում (1833, էջ 90—92) տպագրված է պրոֆ. Կյոսիուսի ուղղված Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի նամակը¹, որ թարգմանել է Արուվյանը: Երրորդ գրքում (1834, էջ 68) տպագրված է ժողովրդական լուսավորության նախարարության² կայսերի ներկայացրած 1833 թ. տարեկան հաշվետվությունը, ուր խոսվում է Արուվյանի ուսման (եռամյա) ժամկետը մի տարով ևս երկարաձգելու մասին²:

«Դորպատյան լրագրի» միայն երկու համարում կային Արուվյանի անվան ուղղակի հիշատակություններ: Մեկն արդեն վերևում հիշատակված 1834 թ. դեկտեմբերի 1-ի № 105-ն է, Ալամզարյանի մահը գուժող նամակով և բացատրականով, իսկ մյուսում (1836 թ., № 12. Beilage [հավելված]) տպագրված է Դորպատի համալսարանի իրավաբանի (Universitäts-gericht) 1836 թ. հունվարի 21-ի հայտարարությունն ի գիտություն նրանց, ովքեր որեւէ պահանջ ունեն, ի թիվս այլոց, նաև Արուվյանի նկատմամբ, որպեսզի չորս շաբաթվա ընթացքում հայտ ներկայացնեն հիշյալ իրավաբանին: Հայտարարությունը գրելուց մոտավորապես մի շաբաթ առաջ Արուվյանն արդեն թողել էր Դորպատը և բռնել վերադարձի ուղին՝ դեպի Պետերբուրգ, իսկ այնտեղից՝ հայրենիք: «Դորպատյան լրագրի» 1830—35 թթ. համարները, բացի ժանցից, բազմաթիվ օժանդակ նյութեր են ընձեռում Արուվյանի օրագրերի մի շարք փաստեր ժամանակագրական ճշտման ենթարկելու և իմաստավորելու համար:

Ամենաուշագրավը «Ենայի ընդհանրական գրական թերթի» 1831 թ. փետրվարյան հավելվածային համարում տպագրված հոդվածն է Դորպատյան համալսարանի մասին, որի վերաբերյալ մենք ցուցումներ գտանք նաև Դորպատի համալսարանի անտիկ գրականության և էսթետիկայի պրոֆեսոր Կարլ Մորգենշտեռնի անտիպ և չափազանց դժվարընթեռնելի օրագրերում³: Արուվյանը մի առիթով ասել է, թե եվրոպացիները «անուն իմ և զգիտատրուծին բազմիցս ընթերցան ի լրագրությունս»⁴: Այդ լրագրերից մեկն, անշուշտ, «Ենայի ընդհանրական գրական թերթն» է: Հեռավոր Դերմանիայում հրատարակվող այդ հանդեսը, պատմելով իր ընթերցողներին «երիտասարդ հայ վանականի» (Արուվյանի) անձի ու գործի, Արարատյան վերելքի ժամանակ պրոֆ. Ֆ. Պարրոտին ցույց տված օժանդակության և հայ ժողովրդի լուսավորության գործն իրականացնելու համար Դորպատ գալու և ուսուցչի կոչման համար պատրաստվելու մասին, եզրափակում է այսպիսով. «Նա պատրաստ է դրան և լավ հույսեր է տալիս»⁵:

¹ „Schreiben des Patriarchen Joannes von Armenien an den Professor Clossius in Dorpat“. Վերջինիս կցված է խմբագրության հետևյալ ծանոթությունը. „Wir teilen diesen Brief nach einer von dem hier studierenden Armenier Chatschatur Abojan verfertigten Übersetzung des armenischen Originals mit...“ և այլն (Այս նամակը մենք հաղորդում ենք հայերեն ընթերցողից այստեղ ուսանող հայազգի խաչատուր Արուվյանի ձեռքով կատարված բառացի թարգմանությամբ):

² Նույնը տե՛ս նաև՝ „Журнал министерства народного просвещения“, ч. I, СПб., 1834, էջ CXCLII:

³ Տե՛ս Տարտուի համալսարանի գրադարանի Ձեռագրերի բաժին, Mrg. [Morgens-tern], DCXII, էջ 55: Այստեղ կարդում ենք „1831 no. 6. 7. unter den Litt. Nachr., Dorpat. von dem jungen armenischen Klostergeistlichen in Dorpat“.

⁴ Դ., II, էջ 42:

⁵ „Intelligenzblatt der Jenaischen Allgem. Literatur—Zeitung“, Num. 6 und 7, Februar, 1831.

8 հանդես, № 2

Այստեղ թվարկված նյութերից ու վավերագրերից վերստին պարզվում է, թե որքան բազմակողմանի հետաքրքրությունների տեր է եղել հայ մեծ լուսավորիչը, որքան նոր անձնավորությունների ու շրջանների հետ է շփվել նա իր հարուստ կյանքի ընթացքում, ինչպիսի լայն ու խոր գիտելիքներ է ունեցել հայ ժողովրդի անցյալի և ներկայի մասին, որքան անկեղծորեն նվիրված է եղել իր հայրենիքին ու ժողովրդին:

Այս նյութերը լրացնում ու ճշտում են Աբովյանի երկերի ցանկը, նոր տվյալներ են հաղորդում նրա կյանքի ու գործունեության մասին, առավել շոշափելի են դարձնում գրական-հասարակական այն միջավայրը, որի մեջ ընթացել է նրա ուսումնառությունը դրսևարարական տարիներին և, վերջապես, թելադրում են մեզ նոր հայացքով վերընթերցելու Աբովյանի արխիվում պահվող մի շարք վավերագրեր, որոնք բազմաթիվ արժեքավոր նոր տվյալներ են պարունակում նրա կյանքի և գործունեության անժանկո՞ղ կողմերի վերաբերյալ:

АБОВЯНОВЕДЧЕСКИЕ ИЗЫСКАНИЯ

П. О. АКОПЯН

(Р е з ю м е)

Статья посвящена результатам изысканий, произведенных в 1959 г. по заданию Института литературы им. М. Абагяна в архивах и музеях Ленинграда, Киева, Тарту и Казани. Автором был обнаружен ряд материалов основоположника новой армянской литературы Хачатура Абовяна, а также мемуарные материалы и документы, посвященные связям и взаимоотношениям Абовяна с русскими и эстонскими деятелями литературы и культуры.

Из обнаруженных материалов рассматриваются статья Абовяна, написанная в связи со смертью видного армянского поэта А. Аламдаряна и опубликованная в газете „Dorptsche Zeitung“ (1 декабря 1834 г.), исторические очерки «Ани», «Двин», «Арташат» и «Акори», написанные Абовяном в октябре 1846 г. по предложению русского писателя А. Н. Муравьева, краткая автобиография — отрывок из студенческих записей писателя (1830) на немецком языке. Автор вкратце останавливается также на дневниках и письмах матери (Юлии), брата (Пауля) и сестры (Паулины Шлейден) известного русского лексикографа В. И. Даля и профессоров Дерптского университета Ф. Паррота, К. Л. Блюма и Ф. Гебеля. В этих дневниках и письмах содержатся интересные сведения об Абовяне, характеризующие взаимоотношения писателя с эстонскими литературно-общественными деятелями (Ф. И. Видеман, Д. Г. Юргенсон, Я. Ионсон), с дерптскими композиторами и музыкантами (И. А. Кольрейф, И. Б. Гросс, Р. Кирхайзен, Э. Э. Г. Гершельман, И. Ф. Б. де Ля Троб). В статье указывается ряд материалов об Абовяне, опубликованных в современной печати (Тифлис, Тарту), а также в зарубежной прессе (Иена).